

ԻՐԱՋԵԿՄԱՆ ԹԵՐԹ
առևտրի իրականացման վայրում առևտուր իրականացնողների համար

1. Ինչպես գրանցել ձեռնարկատիրական գործունեությունը

Առևտրի իրականացման վայրում առևտուր իրականացնող ֆիզիկական անձը պետք է ունենա անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ՝ գրանցվելով իր հաշվառման (բնակության) վայրի պետական ռեգիստրում:

Առևտրի իրականացման վայրում գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց որպես անհատ ձեռնարկատեր գրանցումը կիրականացվի կենտրոնացված ու արագացված կարգով պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանման աշխատակիցների կողմից:

2. Ինչպես ստանալ հարկ վճարողի հաշվառման համար

Անհատ ձեռնարկատերերը պետական գրանցումից հետո հաշվառվում են իրենց հաշվառման վայրի հարկային տեսչությունում և ստանում հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) ու հաշվառման վկայական:

Հարկային հաշվառման համար անհատ ձեռնարկատերերը ներկայացնում են պետական գրանցման վկայականի պատճեն, անձնագրի և սոցիալական քարտի (առկայության դեպքում) պատճենները, ՀՎՀՀ տրամադրման մասին դիմումը:

Անհատ ձեռնարկատերերի հարկային հաշվառումը կենտրոնացված և արագացված կարգով իրականացնելու համար հարկային տեսչության աշխատողների կողմից կցուցաբերվի անհրաժեշտ աջակցություն:

3. Ինչպես և ինչ հարկեր պետք է վճարվեն

1) Եթե առևտուր է իրականացվում Երևանում 7մ², այլ վայրերում 10մ² տարածքը չգերազանցող կրպակների կամ այլ վաճառատեղի միջոցով, ապա առևտրի իրականացման վայրում առևտուր իրականացնողը վճարում է ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐ:

Հաստատագրված վճարի ամսական չափը (անկախ աշխատելու օրերից) 1մ² համար Երևանում՝ 1815 դրամ է, մարզկենտրոններում, Աբովյանում և Վաղարշապատում՝ 792 դրամ, մարզերում՝ 660 դրամ, աղետի գոտում և սահմանամերձ բնակավայրերում՝ 330 դրամ:

Հաստատագրված վճարը վճարվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը :

Հարկային տեսչություն հաստատագրված վճար վճարողը պարտադիր ներկայացնում է՝

ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարություն յուրաքանչյուր կիսամյակի համար նախօրոք՝ հունիսին և դեկտեմբերին: Գործունեությունը նոր սկսելու դեպքում ելակետային տվյալը և ուղղիչ գործակցի մասին հայտարարությունը ներկայացվում է մինչև գործունեություն սկսելը:

յուրաքանչյուր եռամսյակի համար 1մ² տարածքի հաշվով իրացման շրջանառության ծավալի (սահմանային չափի՝ 1.2 մլն (2.5 մլն) դրամ) մասին հայտարարություն՝ մինչև այդ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը:

Հաստատագրված վճար վճարողը ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարություն կարող է ներկայացնել նաև յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվա 1-ը:

Ուշադրություն

Հաստատագրված վճարը փոխարինում է ԱԱՀ-ին և եկամտահարկին և եթե անհատ ձեռնարկատերը այլ գործունեություն չի իրականացնում, ապա ԱԱՀ-ի հաշվարկ չի ներկայացնում:

2) Եթե առևտուր է իրականացվում մեկ խանութի կամ 7մ²(10մ²) տարածքը գերազանցող մեկ կրպակի միջոցով և ներկայացվել է պարզեցված հարկ վճարող համարվելու մասին հայտարարագիր, ապա առևտրի իրականացման վայրում առևտուր իրականացնողը վճարում է ՊԱՐՁԵՑՎԱԾ ՀԱՐԿ :

Պարզեցված հարկը հաշվարկվում է յուրաքանչյուր եռամսյակի համար իրացման շրջանառության 3.5%-ի չափով :

Պարզեցված հարկը վճարվում է յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը և տվյալ եռամսյակի համար նույն ժամկետում ներկայացվում է պարզեցված հարկի հաշվարկ:

Ուշադրություն

Գործունեությունը նոր սկսելու դեպքում պարզեցված հարկ վճարող համարվելու համար հայտարարագիր ներկայացվում է պետական գրանցման օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում, բայց ոչ ուշ մինչև մինչև տվյալ եռամսյակի ավարտը :

Պարզեցված հարկը փոխարինում են ԱԱՀ-ին և եկամտահարկին և պարզեցված հարկ վճարողը ԱԱՀ և եկամտահարկ (շահութահարկ) չի վճարում:

3) եթե առևտուր է իրականացվում մեկից ավելի խանութների, 7մ²(10մ²) տարածքը գերազանցող կրպակների, այլ վաճառատեղերի միջոցով, ապա առևտրի իրականացման վայրում գործունեություն իրականացնողը վճարում է ԱԱՀ ԵՎ ԵԿԱՄՏԱՀԱՐԿ :

Ավելացված արժեքի հարկը և եկամտահարկը հաշվարկվում են ընդհանուր սահմանված կարգով:

4. Ինչպես պետք է կարգավորվեն առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ և առևտուր իրականացնող հարաբերությունները

Առևտրի իրականացման վայրում գործունեություն իրականացնելու համար անհատ ձեռնարկատերը պետք է կազմակերպիչի հետ կնքի գրավոր պայմանագիր և կազմակերպիչին վճարի վճար՝ պայմանագրով նախատեսված կարգով և չափով:

Կազմակերպիչը առևտրի իրականացման վայրում առևտուր իրականացնողներից գանձվող վճարից վճարում է հաստատագրված վճար, որի չափը որոշվում է առևտուր իրականացնողներից հատկացված տարածքների մեծությունից:

5. Ինչպես պետք է իրականացվեն քաղաքացիների հետ դրամական հաշվարկները

Օրենքով սահմանված է, որ կանխիկ դրամով մանրածախ վաճառքի և բնակչությանը ծառայություններ մատուցելու դեպքերում (այդ թվում առևտրի իրականացման վայրերում) հսկիչ-դրամարկղային մեքենաների (ՀԴՄ) կիրառումը պարտադիր է:

ՀԴՄ-ներ տրամադրում են առևտրի իրականացման վայրի կազմակերպիչները: Պետք է կիրառվեն այնպիսի ՀԴՄ-ներ, որոնք հնարավոր է միացնել առևտրի իրականացման վայրի համակարգչային ցանցին:

6. Ինչպես պետք է իրականացվի ՀԴՄ-ների գրանցումը հարկային մարմնում

ՀԴՄ-ների գրանցումը կիրականացվի հարկային տեսչության կողմից արագացված և կենտրոնացված կարգով:

Ուշադրություն

ՀԴՄ-ի գրանցման համար դրա տեղադրման վայրի վերաբերյալ որևէ փաստաթուղթ ներկայացնել անհրաժեշտ չէ :

7. Ինչ հարկային հաշվառում պետք է վարվի

Առևտրի իրականացման վայրից առաքումներ կազմակերպողները պարտավոր են վարել առաքումների գրանցման գիրք՝ ՀՀ կառավարության 31.07.1997թ. N314 որոշմամբ սահմանված կարգով:

Մանրածախ առևտուր իրականացնողները վարում են հասույթների գրանցման գրքեր: Հարկ է նշել, որ օրենսդրական փոփոխությունների փաթեթով (որը պետք է քննարկվի ՀՀ ԱԺ ս.թ. օգոստոսի 19-ի արտահերթ նիստում) տարեկան մինչև 50 մլն դրամ շրջանառություն ունեցողները ՀԴՄ-ների առկայության դեպքում հասույթների գրանցման գրքեր այլևս չեն վարելու: